ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«17» օգոստոսի 2017 թ. № 426-Հ

ՀՐԱՄԱՆ

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-ԻՆ ՏՐՎԱԾ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՀԱՎԱՍՏԻ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ ՏՐՎԱԾ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹԻՎ ԱԾ 097 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով աուդիտորական ծառայությունների իրականացման և ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզավորող հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 15-ի թիվ 8 արձանագրությունը և ղեկավարվելով «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և 2-րդ մասով, ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԱՍԱՏՐՅԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) (ՀՎՀՀ 02618043) և «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության միջև 2017 թվականի մարտի 7-ին կնքված ֆինանսական աուդիտի ծառայությունների մատուցման գնման պայմանագրի

արդյունքում Ընկերության կողմից 2017 թվականի ապրիլի 20-ին տրված աուդիտորական եզրակացությունը ճանաչել ոչ հավաստի:

2. Սույն հրամանի 1-ին կետի հիման վրա դադարեցնել Ընկերությանը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.01.2014թ. տրված ԱԾ թիվ 097 աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիայի գործողությունը:

3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում սույն հրամանի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ